ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

11 հուլիսի 2016 թվականի **թիվ 53** քաղ. Աստանա

Էլեկտրական շարժիչներով շարժիչային տրանսպորտային միջոցների առանձին տեսակների մասով Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում և Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնում, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշ որոշումներում փոփոխություններ կատարելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29–ի պայմանագրի 42-րդ եւ 45-րդ հոդվածներին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի 1-ին հավելվածի 4-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում եւ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնում (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշման հավելված) կատարել հետեւյալ փոփոխությունները՝

ա) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկից հանել ենթադիրքը՝ համաձայն 1-ին հավելվածի,

բ) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում ընդգրկել դիրքերը՝ համաձայն 2-րդ հավելվածի.

գ) սահմանել Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերը՝ համաձայն 3-րդ հավելվածի.

դ) Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ծանոթագրությունները լրացնել հետեւյալ բովանդակությամբ 44Դ եւ 45Դ ծանոթագրություններով՝

«44Դ) Ներմուծման մաքսատուրքի՝ մաքսային արժեքի 0 (զրո) %-ի չափով դրույքաչափը կիրառվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ 2016 թվականի հուլիսի 11-ի թիվ 53 որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ 2017 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ:»:

«45Դ) Ներմուծման մաքսատուրքի՝ մաքսային արժեքի 5%-ի չափով դրույքաչափը կիրառվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ 2016 թվականի հուլիսի 11-ի թիվ 53 որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ 2017 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ:»:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշումներում կատարել փոփոխություններ՝ համաձայն 4-րդ հավելվածի:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո, սակայն 2016 թվականի սեպտեմբերի 2-ից ոչ շուտ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեւսկի	Բ. Սագինտաեւ	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 4

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի
հուլիսի 11-ի թիվ 53 որոշման

ԵՆԹԱԴԻՐՔ,

որը հանվում է Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկից

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանում	Լրացուցիչ չափման միավորներ
8704 90 000 0	– այլ	հատ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 5

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի՝ 2016 թվականի
հուլիսի 11-ի թիվ 53 որոշման

ԴԻՐՔԵՐ,

որոնք ընդգրկվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանում	Լրացուցիչ չափման միավորներ
8704 90 000	- այլ՝	
8704 90 000 1	- - տրանսպորտային միջոցի՝ 5 տ-ից ոչ ավելի լրիվ զանգվածով, որոնց ընթացային մասը բացառապես էլեկտրաշարժիչներն են (մեկ կամ մի քանի)	հատ
8704 90 000 9	- - այլ	հատ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 3

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի
հուլիսի 11-ի թիվ 53 որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքերի

ԱՏԳ ԱԱծածկագիր	Դիրքի անվանում	Ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ (մաքսային արժեքից տոկոսներով կամ եվրոյով, կամ ԱՄՆ դոլարով)
8703 90 109 1	- - - - ավտոմոբիլներ, որոնց ընթացային մասը բացառապես էլեկտրաշարժիչներ են (մեկ կամ մի քանի)	16[44Դ)]
8704 90 000 1	- - տրանսպորտային միջոցի՝ 5 տ-ից ոչ ավելի լրիվ զանգվածով, որոնց ընթացային մասը բացառապես էլեկտրաշարժիչներ են (մեկ կամ մի քանի)	15[45Դ)]
8704 90 000 9	- - այլ	15

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի
հուլիսի 11-ի թիվ 53 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշումներում կատարվող

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 10–ի թիվ 113 որոշմամբ հաստատված՝ այն ապրանքների եւ դրույքաչափերի ցանկում, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետության կողմից անցումային շրջանում կիրառվում են Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի դրույքաչափերից տարբերվող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ «8704 90 000 0» ծածկագրով դիրքը փոխարինել հետեւյալ բովանդակությամբ դիրքերով.

«8704 90 000 1	- - տրանսպորտային միջոցի՝ 5 տ-ից ոչ ավելի լրիվ զանգվածով, որոնց ընթացային մասը բացառապես էլեկտրաշարժիչներ են (մեկ կամ մի քանի)	ՄՄՍ դրույքաչափ 0 0 0 0 0
8704 90 000 9	- - այլ	ՄՄՍ դրույքաչափ 0 0 0 0 0»:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի բարձրագույն խորհրդի

2015 թվականի մայիսի 8-ի թիվ 16 որոշմամբ հաստատված՝ այն զգայուն ապրանքների ցանկում, որոնց նկատմամբ ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի փոփոխության մասին որոշումն ընդունվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ «8704 90 000 0» ծածկագրով դիրքը փոխարինել հետեւյալ բովանդակությամբ դիրքերով՝

«8704 90 000 1	- - տրանսպորտային միջոցի՝ 5 տ-ից ոչ ավելի լրիվ զանգվածով, որոնց ընթացային մասը բացառապես էլեկտրաշարժիչներ են (մեկ կամ մի քանի)
8704 90 000 9	- - այլ»:

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 30-ի թիվ 68 որոշմամբ հաստատված՝ այն ապրանքների եւ դրույքաչափերի ցանկում, որոնց նկատմամբ Ղրղզստանի Հանրապետության կողմից անցումային շրջանում կիրառվում են Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնով սահմանված տուրքերի դրույքաչափերից տարբերվող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր.

ա) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ «8704 90 000 0» ծածկագրով դիրքը փոխարինել հետեւյալ բովանդակությամբ դիրքերով՝

«8704 90 000 1	- - տրանսպորտային միջոցի՝ 5 տ-ից ոչ ավելի լրիվ զանգվածով, որոնց ընթացային մասը բացառապես էլեկտրաշարժիչներ են (մեկ կամ մի քանի)	ՄՄՍ դրույքաչափ 10 10*** 10*** 10 10
8704 90 000 9	- - այլ	ՄՄՍ դրույքաչափ 10 10 10 10 10».

բ) լրացնել հետեւյալ բովանդակությամբ ծանոթագրությամբ՝

«*** Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի հուլիսի 11-ի թիվ 53 որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ 2017 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ կիրառվում է Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը:»:

4. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 59 որոշմամբ հաստատված՝ այն ապրանքների ցանկում, որոնց նկատմամբ Ղազախստանի Հանրապետության կողմից, որպես Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը միանալու պայման ստանձնած պարտավորություններին համապատասխան, կիրառվում են Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի տուրքերի դրույքաչափերի համեմատ ավելի ցածր ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր, եւ այդ տուրքերի դրույքաչափերի ցանկում «**» նշանով ծանոթագրության մեջ «2016 թվականի հունվարի 1-ից» բառերը փոխարինել «2017 թվականի սեպտեմբերի 1-ից» բառերով: